

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
 ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
 Հիմնադրամի հոգաբարձուների
 խորհրդի 12-06-2025 թ. որոշմամբ
 «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
 Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
 հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Վ.ՍԱՐԳՍՅԱՆ 26/3 311	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.00313	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2004-04-30	
1.5 ՀՎՀՀ-ն	02509624	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)091712274	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	http://www.tourfund.am	
1.8 Էլեկտրոնային փոստը	fundtour@mail.ru	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Խաչիկ Հովհաննիսյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	18	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Տարածքի վարձավճարներից	11,742,204
	Զբոսաշրջային ծառայությունից	320,000
	Բանկային ավանդից	1,895,722
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Սենյակների վարձակալումից	53,096,090
	Հիմնական միջոցների վաճառքից	14,380,000

9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	81,434,016	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը		

Նշումներ՝

Ձեռնարկատիրական գործունեությանն ուղղված ծախսերը կազմում են 81,434,016 դրամ;

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 31 էջերից:
 էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
 ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
 ստորագրությունը, անունը, ազգանունը

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏՈՒՐԻՉՄԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2024թ.



ԵՐԵՎԱՆ 2025

Բովանդակություն

	էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	3-5
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ և
ՓՈՐՉԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՀԳԳՀ # 1 20 0333

«ՊՐՈԳՐԵՍ-ԱՌԻԴԻՏ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3

Անկախ Աուդիտորի Եզրակացություն

Հայաստանում Տուրիզմի Զարգացման Հիմնադրամի
Հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է Հայաստանում Տուրիզմի Զարգացման Հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում՝ այդ հաշվետվությունները ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատ են և տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին՝ համաձայն Փոքր և Միջին Կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների Միջազգային ստանդարտնի (ՓՄԿ-ների ՖՀՄՄ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՄԿ-ների ՖՀՄՄ-ի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՄ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այդ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք՝

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացնում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Հիմնադրամը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը, և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

12 Մայիսի 2025թ.

Ռուզաննա Արզումանյան

Գլխավոր տնօրեն



Լուսյա Աբրահամյան

Խմբի ղեկավար-աուդիտոր



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

31 դեկտեմբերի 2024թ.

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	31 դեկտեմբեր	
		2024	2023
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	28,030	29,740
Ոչ նյութական ակտիվներ	5	-	6
Հարկային ակտիվներ	6	2,296	2,322
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	7	77	117
		<u>30,403</u>	<u>32,185</u>
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	8	339	476
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	80,383	93,869
Դրամական միջոցներ	10	160,321	23,257
		<u>241,043</u>	<u>117,602</u>
Ընդամենը ակտիվներ		<u>271,446</u>	<u>149,787</u>
		<u>154,508</u>	<u>145,078</u>
Չուտ ակտիվներ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ոչ ընթացիկ շնորհներ		-	-
Հետաձգված հարկային պարտավորություններ		-	-
		<u>-</u>	<u>-</u>
Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ փոխառություն		-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	114,433	4,709
Շահութահարկի գծով պարտավորություն		2,505	-
		<u>116,938</u>	<u>4,709</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>271,446</u>	<u>149,787</u>

Խաչիկ Հովհաննիսյան
Գլխավոր տնօրեն



Անիկա Խաչատրյան
Գլխավոր հաշվապահ

Վավերացման ամսաթիվ 12/05/2025թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ

Ծանոթ.	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ծառայությունների մատուցումից հասույթ	320	1,070
Վարձակալությունից հասույթ	11,942	9,888
Այլ եկամուտներ	53,346	60,220
	<u>65,608</u>	<u>71,178</u>
Աշխատավարձի գծով ծախսեր	(35,483)	(36,386)
Հիմնական միջոցների մաշվածություն, նորոգման և սպաս. ծախսեր	(442)	(1,579)
Տարածքի վարձակալության ծախսեր	(1,726)	(1,478)
Գործուղման ծախսեր	(523)	-
Գրասենյակային ծախսեր	(18,496)	(17,956)
Նյութաձախս, այդ թվում վառելիք	(380)	(400)
Առդիտի և խորհրդատվության ծախսեր	(747)	(854)
Բանկային ծախս	(180)	(175)
Չփոխհատուցվող հարկեր	(2,276)	(1,994)
Այլ ծախսեր	(7,594)	(2,184)
Գործառնական գործունեությունից շահույթ(վնաս)	<u>(2,239)</u>	<u>8,172</u>
Ֆինանսական հոդվածներ	1,790	1,331
Պարտքային կորուստ	-	-
Դրամաշնորհից եկամուտ (սուբսիդիա)	-	-
Այլ ոչ գործառնական օգուտ/վնաս	12,410	48
Շահույթը (վնասը) մինչև հարկերը	<u>11,961</u>	<u>9,551</u>
Շահութահարկի գծով (ծախս)	-	-
փոխհատուցում	13 (2,531)	(1,946)
Տարվա զուտ արդյունք	<u>9,430</u>	<u>7,605</u>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	<u>9,430</u>	<u>7,605</u>

Խաչիկ Հովսեփյան
Գլխավոր տնօրեն



Անիշկա Խաչատրյան
Գլխավոր հաշվապահ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառ. իրացումից	53,416	60,138
Գործառնական այլ գործունեությունից	11,878	12,507
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	65,294	72,645
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Նյութեր, ապրանքների ձեռք բերման գծով	(462)	(1,451)
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	(25,564)	(22,115)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(27,275)	(28,691)
Վճարումներ բյուջե	(9,977)	(10,735)
Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ	(346)	(347)
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	(3,071)	(1,470)
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	(66,695)	(64,809)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(1,401)	7,836
Ներդրումային գործունեությունից մուտքեր		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից	123,676	-
Ֆինանսական ակտիվներով գործառնություններից	38,800	-
Շահաբաժինների և տոկոսների ստացումից	2,437	-
Ներդրումային այլ գործունեությունից մուտքեր	-	-
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր	164,913	-
Ներդրումային գործունեությունից ելքեր		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով	190	-
Ֆինանսական ակտիվների ձեռք բերումից, փոխառությունների տրամադրումից	26,100	-
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	26,290	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	138,623	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ստացված շահաբաժիններ և տոկոսներ	-	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից	-	-
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ելքեր	-	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	-	-
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	137,222	7,836
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	(158)	(127)
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	23,257	15,548
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	160,321	23,257

Խաչիկ Հովսեփյան
Գլխավոր տնօրեն



Անիշկա Խաչատրյան
Գլխավոր հաշվապահ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Հայաստանում Տուրիզմի Չարգացման Հիմնադրամ
2024թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

Հայաստանում Տուրիզմի Չարգացման Հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) ստեղծվել է տուրիզմի և էքսկուրսիաների հայկական հանրապետական խորհրդի վերակազմավորման ձևով վերակազմակերպման արդյունքում և գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարի 2001 թվականի հունվարի 3-ի թիվ 16 հրամանով: 30.04.2004 թվականին հիմնադրամը վերագրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան (պետակա գրանցման համարը՝ 222.160.00313, պետական գրանցման վկայական՝ 03Ա 064892, ՀՎՀՀ՝ 02509624): Հիմնադրամը ունի գրանցված մասնաճյուղ, որը կոչվում է Հայաստանում Տուրիզմի Չարգացման Հիմնադրամի «Նարիր» մասնաճյուղ (պետակա գրանցման համարը՝ 222.060.01058, պետական գրանցման վկայական՝ 01Բ 002277, գրանցված 30.01.2009թ.):

Հիմնադրամը հանդիսանում է Ստեփանավանի «Լոռի Բերդ» տուրիստական հանգրվան ՍՊԸ-ի 100% բաժնեմասի տիրապետողը, սակայն չի իրականացնում վերահսկողություն նրա նկատմամբ: Սեփականատիրոջ իրավունքից բխող վերահսկողության իրավունքը համաձայնագրի հիման վրա փոխանցված է Ստեփանավանի «Լոռի Բերդ» տուրիստական հանգրվան ՍՊԸ-ի տնօրենին, որի պատճառով Ստեփանավանի «Լոռի Բերդ» տուրիստական հանգրվան ՍՊԸ-ն չի համարվում Հիմնադրամի համար ոչ դուստր ընկերություն, ոչ ասոցիացված կազմակերպություն և ոչ էլ համատեղ ձեռնարկում:

Հիմնադրամի նպատակներն են.

- ✓ Մարդկանց հանգստի կազմակերպումն ու տուրիզմի և էքսկուրսիոն գործի զարգացումը;
- ✓ Տուրիստական ուղևորությունների կազմակերպում, արշավներ և էքսկուրսիաներ;
- ✓ Աջակցություն Հայաստանի Հանրապետության տուրիստական և էքսկուրսիոն կազմակերպությունների կողմից ցուցաբերվող սպասարկումների որակի բարձրացմանը;
- ✓ Հայկական տուրիզմի գովազդում, տուրիստական գովազդային նյութերի, քարտեզների, բուկլետների, ուղեցույցերի հրատարակում;
- ✓ Կապերի հաստատում ՀՀ-ում և այլ պետություններում գործող տուրիստական կազմակերպությունների հետ;

Հիմնադրամը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն միայն այն դեպքում, երբ դա ծառայում է իր նպատակների իրականացմանը, որոնց համար նա ստեղծվել է և համապատասխանում է այդ նպատակներին: Մասնավորապես՝

- ✓ Կազմակերպում է տուրիստական ուղևորություններ, արշավներ և էքսկուրսիաներ Հայաստանում և արտերկրներ;
- ✓ կազմակերպում է տուրիստական ուղեգրերի, տեղեկատվական և գովազդային նյութերի վաճառք;
- ✓ ռեստորանային գործունեության իրականացում;
- ✓ տուրիստական հանդերձանքի և գույքի վարձակալության կազմակերպում;
- ✓ հյուրանոցային գործունեության և հասարակական սննդի կազմակերպում
- ✓ և այլն:

Հիմնադրամը բարեգործական հիմունքներով կարող է ներգրավվել միջոցներ իր կանոնադրական նպատակների իրականացման համար:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Վ. Մարգարյան 26/3:

2024թ. աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 18 մարդ (2023թ.՝ 19 մարդ):

2. Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ ՖՀՄՍ-ի) համաձայն, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից:

2.2 Անցումը ամբողջական ՖՀՄՍ-ներից ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին

Հիմնադրամը, հիմնվելով ՀՀ հաշվապահական հաշվառման մասին օրենքի 5-րդ հոդվածին 2021թ.-ի հունվարի 1-ից հաշվապահական հաշվառումն իրականացնում է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան: Համաձայն ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի անցումնային դրույթների ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի անցման ամսաթիվ է համարվում 2020թ.-ի հունվարի 1-ը:

ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին անցման արդյունքում փոխվել են Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության «Ընդհանուր դրույթներ», «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը», «Ներդրումային գույք», «Ֆինանսական գործիքներ» և «Ծնորհներ» բաժինները: Սակայն նշված տարրերի փոփոխությունները չեն առաջացրել ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին անցման ամսաթվի դրությամբ առկա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի տարրերի մնացորդներում որևէ փոփոխություն:

2.3 Դանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքով, բացառությամբ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնական ճանաչման պահին չափվում են իրական արժեքով:

2.4 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույն կերպով է արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական էությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթով ներկայացված տեղեկատվությունն առավել օգտակար է Հիմնադրամ ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է հազար միավորի ճշտությամբ:

2.5 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կատարի կարևոր գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրությունները և գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 14-ում:

2.6 ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ում փոփոխությունների ընդունում

31/12/2024թ.-ի դրությամբ ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ում թողարկված բայց դեռ ուժի մեջ չմտած փոփոխություններ և լրացումներ չկան:

2.7 Նախորդ տարիների սխալների ուղղում

Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվությունը, ներկայացվում են այնպես, իբր էական սխալներն ուղղվել են այն ժամանակաշրջանում, որում դրանք կատարվել են: Հետևաբար, ներկայացված յուրաքանչյուր ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը ներառվում է այդ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մեջ: Ներկայացված ժամանակաշրջաններից ամենավաղ ժամանակաշրջանի կուտակված արդյունքների սկզբնական մնացորդը կարգավորվում է ճշգրտումների այն գումարով, որը վերաբերում է այն ժամանակաշրջաններին, որոնք նախորդում են վերջին ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների համադրելի տեղեկատվության մեջ ներգրավված ժամանակաշրջաններին: Նախորդող ժամանակաշրջանների վերաբերյալ ներկայացված որևէ այլ տեղեկատվություն մույնպես վերաներկայացվում է:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Ընդհանուր դրույթներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համաձայն:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները կիրառվել են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Ստանդարտի փոփոխությունները, որոնք հրապարակվել են, բայց դեռևս ուժի մեջ չեն մտել և վաղաժամ չեն ընդունվել Հիմնադրամի կողմից, ներկայացված են ծանոթագրություն 2.6-ում:

Էական հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները, որոնք կիրառվել են ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ներկայացված են ստորև:

3.2 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի *ֆինանսական հաշվետվությունների ներկայացում* 3-րդ բաժնի համաձայն: Հիմնադրամը որոշել է ներկայացնել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվություն:

Կազմակերպությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ներկայացնում է ակտիվներն ու պարտավորությունները ընթացիկ և ոչ ընթացիկ դասակարգմամբ: Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ծախսերը դասակարգվում են ըստ գործառույթի: Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը ներկայացվում է ուղղակի մեթոդով, իսկ տոկոսների և շահաբաժինների գծով հոսքերը դասակարգվում են որպես ներդրումային գործունեությունից ներհոսքեր և ֆինանսավորման գործունեությունից արտահոսքեր:

3.3 Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար ֆունկցիոնալ արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից հրապարակված՝ արտարժույթային շուկաներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմել է 396.56 ՀՀ դրամ, 1 Եվրոն կազմել է 413.89 ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմել է 404.79 ՀՀ դրամ, 1 Եվրոն կազմել է 447.9 ՀՀ դրամ, 2023թ. հունվարի 01-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմել է 393.57 ՀՀ դրամ, 1 Եվրոն կազմել է 420.06 ՀՀ դրամ): Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես շահույթ կամ վնաս:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես շահույթ կամ վնաս:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ Հիմնադրամի դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ մախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

3.4 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Սկզբնական ճանաչման պահին հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով: Ձեռք բերված հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, տրանսպորտային ծախսումները, ինչպես նաև ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ծախսումները: Գործարկման և նման նախաարտադրական ծախսումները հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում: Սեփական ուժերով կառուցվող հիմնական միջոցների սկզբնական արժեքը որոշվում է նույն սկզբունքներով, ինչ պաշարների ինքնարժեքը: Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, մինչև դրանց նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելը, հանդիսանում են անավարտ հիմնական միջոցներ և հաշվառվում են դրանց ինքնարժեքով:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրս գրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես շահույթ կամ վնաս:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, կապիտալացվում են տեղադրվող բաղկացուցիչ հաշվեկշռային արժեքի հետ միասին:

Ճանաչման նշված սկզբունքի համաձայն՝ կազմակերպությունը գնահատում է իր հիմնական միջոցների գծով բոլոր ծախսումները դրանց կատարման պահին: Այս ծախսումները ներառում են հիմնական միջոցի միավորի կառուցման կամ ձեռքբերման սկզբնավորման ծախսումները և հետագայում կատարված ծախսումները՝ կապված դրա ավելացման, մի մասի փոխարինման կամ սպասարկման հետ:

Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում՝ որպես շահույթ կամ վնաս:

Հիմնական միջոցների մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ ներառվում է այլ ակտիվի ինքնարժեքում՝ կիրառելով ուղիղ գծային մեթոդը, եթե մաշվածության հաշվարկման այլ մեթոդը չի ապահովում հիմնական միջոցի տնտեսական օգուտների նվազեցման ավելի արժանահավատ պատկերը:

Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր, շինություններ	20 տարի,
Մեքենաներ, սարքավորումներ	5 տարի,
Տրանսպորտային միջոցներ	5 տարի,
Արտադրական և տնտեսական գույք	5 տարի,
Համակարգչային տեխնիկա	1 տարի,
Այլ հիմնական միջոցներ	10 տարի:

3.5 Ներդրումային գույք

3.6.1. Սահմանում

Ներդրումային գույքը գույք է (հող կամ շենք, կամ շենքի մի մաս, կամ և՛ հող, և՛ շենք), որը պահվում է Հիմնադրամի կողմից վարձակալությունից եկամուտ վաստակելու կամ դրա արժեքի աճի, կամ էլ միաժամանակ այդ երկու նպատակներով, այլ ոչ թե՛

ա) արտադրությունում օգտագործելու, ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման, կամ վարչական նպատակներով օգտագործելու համար, կամ
բ) սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար:

3.6.2. Չափում

Ներդրումային գույքը սկզբնապես չափվում է իր ինքնարժեքով (սկզբնական արժեքով):

Գործառնության հետ կապված ծախսումները ներառվում են սկզբնական չափման մեջ: Գնված ներդրումային գույքի ինքնարժեքը ներառում է դրա գնման գինը և ուղղակիորեն վերագրելի ցանկացած ծախսում:

Ներդրումային գույքի միավորը որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իրական արժեքով, եթե հնարավոր է այն որոշել առանց անհարկի ծախսումների և ջանքերի:

3.6.3. Մաշվածություն

Եթե ներդրումային գույքի իրական արժեքը հանարավոր չէ արժանահավատորեն գնահատել առանց հիմնադրամի համար անհարկի ծախսումների և ջանքերի, ապա ներդրումային գույքը չափվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Այդ դպքում ներդրումային գույքի միավորի մաշեցնող (մաշվածության միջոցով որպես ծախսում ճանաչման ենթակա) գումարը պարբերաբար բաշխվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Հողի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Ներդրումային գույքի օգտակար ծառայությունը արտահայտված է ժամկետով:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

Շենքեր՝ 20-55 տարի:

3.6.4. Վերադասակարգումներ

Գույքը որպես ներդրումային վերադասակարգելը կամ հակառակը տեղի է ունենում այն և միայն այն դեպքում, երբ փոփոխվել է դրանց օգտագործումը, որի վկայություններն են՝

ա) Հիմնադրամի կողմից գույքի զբաղեցումը սկսելը. այս դեպքում ներդրումային գույքը վերադասակարգվում է որպես հիմնական միջոց,

բ) Հիմնադրամ կողմից գույքի զբաղեցումն ավարտելը. այս դեպքում Հիմնադրամի կողմից զբաղեցված գույքը վերադասակարգվում է որպես ներդրումային գույք:

3.6 Վարձակալություն

ա/ Գործառնական վարձակալություն - վարձակալությունը համարվում է գործառնական այն դեպքերում, երբ չի նախատեսվում սեփականության իրավունքից ծագող էական ռիսկերի և հատույցների փոխանցում վարձակալին: Գործառնական վարձակալության վարձավճարների ընդհանուր գումարը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքներում գծային մեթոդով: Այն դեպքերում, երբ վարձակալված ակտիվն օգտագործվում է արտադրական նպատակներով վարձավճարները ճանաչվում են արտադրանքի ինքնարժեքում:

բ/ Ֆինանսական վարձակալություն – վարձակալությունը համարվում է ֆինանսական այն դեպքերում, երբ սեփականության իրավունքից ծագող ըստ էության բոլոր էական ռիսկերը և հատույցները փոխանցվում են վարձակալին:

Այն դեպքերում երբ կազմակերպությունը հանդիսանում է ֆինանսական վարձակալության վարձակալ, վարձակալված գույքը ակտիվ է ճանաչվում վարձակալության սկզբի դրությամբ իրական արժեքով, կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով եթե վերջինս ավելի փոքր է: Ակտիվի մաշվածությունը հաշվեկարգվում է հիմնական միջոցների մաշվածության համար նախատեսված մոտեցումներով: Նույն չափով ճանաչվում է նաև համապատասխան պարտավորությունը: Պարտավորության սկզբնական արժեքի և վճարման ենթակա համախառն գումարի տարբերությունը վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում է որպես տոկոսային ծախսում այնպիսի տոկոսադրույքով, որն ապահովում է հատուցման հաստատուն պարբերական դրույք ժամանակաշրջանի սկզբի դրությամբ պարտավորության հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Այն դեպքերում երբ կազմակերպությունը հանդիսանում է ֆինանսական վարձակալության վարձատու, վարձակալված գույքը ապաճանաչվում է, և ճանաչվում է դեբիտորական պարտք վարձակալությունում գուտ ներդրումների չափով: Ֆինանսական վարձակալության հանձնած գույքի հաշվեկշռային արժեքի և վարձակալությունում գուտ ներդրման տարբերությունը ճանաչվում է որպես շահույթ կամ վնաս վարձակալության սկզբին:

Դեբիտորական պարտքի սկզբնական արժեքի և ստացման ենթակա համախառն գումարի տարբերությունը ճանաչվում է որպես տոկոսային եկամուտ այնպիսի տոկոսադրույքով, որն ապահովում է հատուցման հաստատուն պարբերական դրույք ժամանակաշրջանի սկզբի դրությամբ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Վարձակալության ժամկետ է համարվում այն ժամանակահատվածը, որի համար կնքվել է վարձակալության պայմանագիրը և որի համար այն չի կարող չեղյալ համարվել, գումարած այն ժամանակահատվածը, որով վարձակալը կարող է երկարաձգել ակտիվի վարձակալումը լրացուցիչ վճարի դիմաց կամ առանց այդպիսի վճարի այն դեպքում, երբ վարձակալման ժամկետի սկզբում առկա է բավականաչափ համոզմունք առ այն, որ վարձակալը մտադիր է օգտվել այդ իրավունքից:

3.7 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է, հանած համարման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռք բերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսումները: Պաշարների ինքնարժեքը որոշվում է՝ ԱՍԱԵ (FIFO) բանաձևով:

3.8 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական գործիքների հաշվառումը իրականացվում է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի *Հիմնական ֆինանսական գործիքներ* 11-րդ և *Այլ ֆինանսական գործիքներին վերաբերող հարցեր* 12-րդ բաժինների պահանջներին համապատասխան: Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվների հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Հիմնական ֆինանսական գործիքներից առաջացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են գործարքի գնով՝ գումարած կամ հանած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք հետագայում չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնց գծով գործարքի հետ կապված ծախսումները ճանաչվում են ժամանակաշրջանի ծախս: Այնուամենայնիվ, եթե ֆինանսական գործիքից բխող համաձայնությունն, ըստ էության, իրենից ներկայացնում է ֆինանսավորման գործարք՝ ապա ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես չափվում է ապագա վճարումների ներկա արժեքով՝ գեղչված համանման պարտքային գործիքի շուկայական տոկոսադրույքով:

Ոչ հիմնական ֆինանսական գործիքներից առաջացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- Պարտքային գործիքներից ձևավորված ֆինանսական ակտիվներ,
- Փոխառություն ստանալու պարտավորվածություններ,
- Հիմնական ֆինանսական գործիք հանդիսացող բաժնային գործիքներ,
- Ոչ հիմնական ֆինանսական գործիք հանդիսացող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և որը ցույց է տալիս, թե հետագայում ստացվող օգուտներն ու վնասները ինչպես պետք է արտացոլվեն ֆինանսական հաշվետվություններում:

Ընդհանուր առմամբ, բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվի արժեզրկման գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «ֆինանսական ծախս» և «ֆինանսական եկամուտ» հոդվածներում:

I. Պարտքային գործիքներից ձևավորված ֆինանսական ակտիվներ

Պարտքային գործիքներից առաջացող ֆինանսական ակտիվները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են: Երբ պարտքային գործիքը ըստ էության ֆինանսավորման գործարք է (անտոկոս կամ ցածր տոկոսով փոխառություններ, երկարաժամկետ դեբիտորական պարտքեր և այլն), ապա ֆինանսական ակտիվը սկզբնապես չափվում է ապագա վճարումների ներկա արժեքով՝ գեղչված համանման պարտքային գործիքի շուկայական տոկոսադրույքով: Այլ դեպքերում սկզբնական արժեք է համարվում գործարքի գինը գումարած գործարքի գծով ծախսումներ: Սկզբնական ճանաչումից հետո պարտքային գործիքներից ձևավորված ֆինանսական ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվելուց հետո հետագայում չափվում են անվանական արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Պարտքային գործիքներից ձևավորված ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Հիմնադրամը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և ժամանակին չվճարումը ցուցանիչ են այն բանի, որ պարտքն արժեզրկված է:

Արժեզրկման պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

II Փոխառություն ստանալու պարտավորվածություններ

Փոխառություն ստանալու պարտավորվածությունների սկզբնական չափումը կատարվում է սկզբնական արժեքով (որը հաճախ 0 է): Հետագա չափումն իրականացվում է սկզբնական արժեքով՝ հանած արժեքը կումից կորուստները:

III Հիմնական ֆինանսական գործիք հանդիսացող բաժնային գործիքներ

Բաժնային գործիքներից ձևավորվող ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես հիմնական ֆինանսական գործիք, եթե համարվում են ոչ փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերում և առանց հետ վաճառքի իրավունքի սովորական կամ արտոնյալ բաժնետոմսերում ներդրումներ:

Սկզբնական չափումը կատարվում է գործարքի գնով գումարած գործարքի գծով ծախսումները: Եթե իրական արժեքը հնարավոր է գնահատել առանց անհարկի ծախսումների և ջանքերի, ապա հետագա չափումն իրականացվում է իրական արժեքով՝ ճանաչելով իրական արժեքի տատանումները շահույթ կամ վնաս: Այլապես, հետագա չափումն իրականացվում է սկզբնական արժեքով՝ հանած արժեքը կումից կորուստները:

IV Ոչ հիմնական ֆինանսական գործիք հանդիսացող ֆինանսական ակտիվներ

Նախորդ խմբերում չդասակարգված ֆինանսական ակտիվները համարվում են ոչ հիմնական ֆինանսական գործիքներից առաջացող ֆինանսական ակտիվներ: Այն կարող է ներառել ածանցյալ գործիքները, փոխարկվող պարտատոմսերը, և այլն:

Սկզբնական և հետագա չափումներն իրականացվում են իրական արժեքով՝ բացառությամբ այն բաժնային գործիքների, որոնց իրական արժեքը հանարվոր չէ որոշել առանց անհարկի ծախսումների և ջանքերի: Վերջիններս չափվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեքը կումից կորուստները: Իրական արժեքի տատանումները ճանաչվում են շահույթ կամ վնաս:

V Մնացորդները դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցներ, բանկային հաշիվների մնացորդներ, որոնք ներկայացված են ֆինանսական ակտիվներում:

Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են պարտքային գործիքներից և ոչ հիմնական ֆինանսական գործիքներից ձևավորված ֆինանսական պարտավորությունները:

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>		
Ստացված փոխառություններ	-	-
Բանկային վարկեր	-	-
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	2,168	1,605
Ընդամենը	2,168	1,605

I Պարտքային գործիքներից ձևավորված ֆինանսական պարտավորություններ

Պարտքային գործիքներից առաջացող ֆինանսական պարտավորությունները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններն են: Երբ պարտքային գործիքը ըստ էության ֆինանսավորման գործարք է (անտոկոս կամ ցածր տոկոսով փոխառություններ, երկարաժամկետ կրեդիտորական պարտքեր և այլն), ապա ֆինանսական պարտավորությունը սկզբնապես չափվում է ապագա վճարումների ներկա արժեքով՝ զեղչված համանման պարտքային գործիքի շուկայական տոկոսադրույքով: Այլ դեպքերում սկզբնական արժեք է համարվում գործարքի գինը հանած գործարքի գծով ծախսումներ: Սկզբնական ճանաչումից հետո պարտքային գործիքներից ձևավորված ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ընթացիկ կրեդիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվելուց հետո հետագայում չափվում են անվանական արժեքով:

II Ոչ հիմնական ֆինանսական գործիք հանդիսացող ֆինանսական պարտավորություններ

Այլ ֆինանսական պարտավորությունները համարվում են ոչ հիմնական ֆինանսական գործիքներից առաջացող ֆինանսական պարտավորություններ: Այն կարող է ներառել ածանցյալ գործիքները, փոխարկվող պարտատոմսերը, տրամադրված ֆինանսական երաշխավորությունները, և այլն: Սկզբնական և հետագա չափումներն իրականացվում են իրական արժեքով, իսկ իրական արժեքի տատանումները ճանաչվում են շահույթ կամ վնաս:

3.9 Արժեզրկում

Հիմնական միջոցների

Մաշվող ակտիվները վերանայվում են արժեզրկման համար, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է դրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև դրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

3.10 Շահութահարկ

Ընթացիկ հարկն իրենից ներկայացնում է տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի (վնասի) գծով վճարման (փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումարը: Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) պետք է չափվեն այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հիմնադրամի հետաձգված հարկերը (հետաձգված հարկային պարտավորությունները և հետաձգված հարկային ակտիվները) պայմանավորված են ժամանակավոր տարբերությունների (հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ) և չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ: Ժամանակավոր տարբերությունների հետ կապված հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող գումարների (հարկային բազայի) ժամանակավոր տարբերությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմնվելով հարկերի այն դրույքների վրա, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են իրացվել չօգտագործված հարկային վնասները և փոխհատուցումները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այն չափով, որքանով այլևս հավանական չէ, որ դրան առնչվող հարկային օգուտները կիրացվեն:

3.11 Պետական շնորհներ

Շնորհները (ներառյալ ոչ պետական աղբյուրներից ստացված) ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ՝ ներկայացվելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորություններ բաժնում, այն պահին, երբ կա բավարար հավաստիացում որ կազմակերպությունը ստանալու է շնորհը և բավարարելու է դրան կից պայմանները:

Այն շնորհները որոնց հիմնական պայմանն է գնել, կառուցել կամ այլ կերպ ձեռքբերել երկարաժամկետ ակտիվ, ներկայացվում են որպես ոչ ընթացիկ շնորհներ, սկզբնապես ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, իսկ հետագայում ճանաչվում են շահույթ/վնասում ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Այլ պետական շնորհները ներկայացվում են որպես ընթացիկ շնորհներ, սկզբնապես ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, իսկ հետագայում ճանաչվում են շահույթ/վնասում սխտեմատիկ հիմունքով՝ համապատասխան այն ծախսումների ծախս ճանաչմանը, որոնց փոխհատուցման համար նախատեսված են:

Շնորհը, որը Հիմնադրամի համար չի սահմանում որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամուտ, երբ շնորհի գծով մուտքերը ստացման ենթակա են:

Պետական շնորհները, որոնք տրամադրվում են ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն, պետք է ճանաչվեն շահույթ/վնասում այն պահին, երբ դառնում են ստացման ենթակա>:

3.12 Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցումների իրական արժեքով՝ հաշվի առնելով Հիմնադրամի կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանի հիման վրա:

4 Հիմնական միջոցներ

հազար դրամ

	Հող, շենքեր և շինություններ	Մեքենասարքավոր., տրանսպորտային միջոցներ	Արտադրական և տնտեսական գույք, այլ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>				
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	134,476	26,328	2,176	162,980
Ավելացում Օտարում և Նվազեցում	(111)	(7,238)	190	190
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	134,365	19,090	1,957	155,412
<i>Կուտակված մաշվածություն և արժեզրկում</i>				
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	106,652	24,525	2,063	133,240
Տարվա ծախս Նվազեցում	(111)	(5,546)	97	208
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	106,541	19,090	(409)	(6,066)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	106,541	19,090	1,751	127,382
<i>Հաշվեկշռային արժեք</i>				
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	27,824	1,803	113	29,740
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	27,824	-	206	28,030

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հող, շենքեր և շինություններ» դասում ներառված են 0.433885 հա ընդհանուր մակերեսով հողամաս, որի հաշվեկշռային արժեքը կազմում է 27,824 հազար դրամ (0.433885 հա հողամասից 0.07395 հա հողամասը ծանրաբեռնված է մշտական սերվիտուտով: ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 9-րդ կետում ամրագրված դեպքերում գույքը ձեռք բերողը պետք է վճարի 0.371055 հողամասի բաժնեմասին համապատասխան կադաստրային արժեքը):

5 Ոչ նյութական ակտիվներ

հազար դրամ

	Համակարգչային ծրագիր	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>		
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	198	198
Ավելացում	-	-
Նվազեցում	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	198	198
<i>Կուտակված մաշվածություն և արժեզրկում</i>		
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	192	192
Տարվա ծախս	6	6
Նվազեցում	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	198	198
<i>Հաշվեկշռային արժեք</i>		
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6	6
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-

6 Հարկային ակտիվներ

հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Նվազագույն շահութահարկ	-	-
Հետաձգված շահութահարկ	2,296	2,322
Ընդամենը	2,296	2,322

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ

	2024թ. հունվարի 01-ի դրությամբ	ճանաչված ֆինանսական արդյունք	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Պարտքային կորուստ Աշխատակիցների փոխհատուցումների գծով	1,765	-	1,765
	557	(26)	531
	<u>2,322</u>	<u>(26)</u>	<u>2,296</u>
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
Փոխառություններ Հ/Մ մաշվածության արդյունքում	-	-	-
	-	-	-
Ընդամենը	<u>2,322</u>	<u>(26)</u>	<u>2,296</u>

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ

	2023թ. հունվարի 01-ի դրությամբ	ճանաչված ֆինանսական արդյունք	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Պարտքային կորուստ Աշխատակիցների փոխհատուցումների գծով	1,765	-	1,765
	643	(86)	557
	<u>2,408</u>	<u>(86)</u>	<u>2,322</u>
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
Փոխառություններ Հ/Մ մաշվածության արդյունքում	-	-	-
	-	-	-
Ընդամենը	<u>2,408</u>	<u>(86)</u>	<u>2,322</u>

7 Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

Հազար դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Ավելացում		2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
		Ավելացում	Նվազում	
Ոչ ընթացիկ ներդրումներ Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար	50	-	-	50
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ՝ Հետաձգված ծախսեր	67	27	(67)	27
Ընդամենը	117	27	(67)	77

8 Պաշարներ

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Հումք և նյութեր, այդ թվում՝ Վառելանյութ	339
Պահեստամասեր	-	-
Այլ նյութեր	-	-
Ընդամենը	339	476

9 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Առևտրային դեբիտորական պարտքեր	85,877	85,877
Պարտքային կորուստներ	(9,809)	(9,809)
Տրված կանխավճարներ	500	571
Ավանդներ*	-	15,000
Տրամադրված փոխառություններ**	2,300	-
Այլ, այդ թվում %-ային եկամուտներ	758	1,493
	<u>79,626</u>	<u>93,132</u>
Դեբիտորական պարտքեր պետական բյուջեի հանդեպ	757	737
Հետաձգված ԱԱՀ	-	-
Ընդամենը	<u>80,383</u>	<u>93,869</u>

Առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրելիությունը որոշելիս հաշվի է առնվում պարտքի մարման ժամանակացույցի ցանկացած փոփոխություն՝ սկսած պարտքերի առաջացման պահից մինչև հաշվետու ամսաթիվը:

*Բանկային ավանդներ

Ստորև ներկայացված են Հայաստանյան ռեզիդենտ Բանկում ներդրված ավանդների համար գործող պայմանները:

Արժույթ	Տոկոսադրույք	Վերջնաժամկետ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
22,000 հազար ՀՀ դրամ	9%	30/12/2024	-	15,000

** Տրամադրված փոխառություն

2024թ-ին մեկ տարի ժամկետով տրամադրվել է փոխառություն հայաստանյան ռեզիդենտ իրավաբանական անձին՝ անկտոկոս (<< «Լեռնագործների, Մետալուրգների և Ոսկերիչների» արհեստակցական կազմակերպությունների ՃՀՄ ԻԱՄ-ին) 4,100 հազար դրամ: 2024թ-ի դեկտեմբերի 31-ին դրությամբ չվերադարձված փոխառությունների գումարը կազմում է 2,300 հազար դրամ:

10 ԴՐԱՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՀԱՍԱՐԺԵՔՆԵՐ

Դրամական հոսքերի հաշվետվությունում ներկայացված դրամական միջոցները և դրա համարժեքները ներառում են հետևյալը.

հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հաշիվներ բանկում	160,320	23,257
Կանխիկ դրամ	1	-
Ընդամենը	160,321	23,257

11 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Առևտրային կրեդիտորական պարտքեր	2,158	1,613
Հատուցումներ աշխատակիցներին	-	-
Վճարվելիք սոց. հատկացումներ	-	-
Կանխավճարներ հաճախորդներից	109,296	-
Հարկերի գծով պարտավորություններ՝ բացառությամբ շահութահարկի	22	-
Ընթացիկ պահուստներ արձակուրդայինի գծով	2,947	3,091
Այլ կրեդիտորական պարտքեր	-	-
Այլ ընթացիկ պարտավորություններ	10	5
Ընդամենը	114,433	4,709

12 Այլ ոչ գործառնական շահույթ/վնաս

հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից եկամուտ	-	232
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից ծախսեր	(158)	(184)
Հիմնական միջոցի օտարումից եկամուտներ	14,380	-
Հիմնական միջոցի օտարումից ծախսեր	(1,691)	-
Ակտիվին վերաբերող շնորհից եկամուտներ	-	-
Անհատույց տրված ակտիվներից ծախսեր	(120)	-
Ընդամենը	12,410	48

13 Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)
հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	2,505	1,859
Հետաձգված հարկ	26	87
Ընդամենը	2,531	1,946

2024թ. Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը 18 տոկոս է (2023թ.՝ 18%):

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթը մինչև հարկումը	11,961		9,551	
Շահութահարկի հաշվարկ սահմանված հարկային դրույքով	2,153	18.00	1,719	18.00
Չնվազեցվող / չհարկվող հոդվածներ	378	3.16	227	2.37
Հարկային վնասի ապահանջում				
Շահութահարկի գծով ծախս/ (փոխհատուցում)	2,531	21.16	1,946	20.37

14 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի և այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք համարվում են ընդունելի տվյալ հանգամանքներում:

Հիմնադրամը կատարում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Հաշվապահական գնահատումները, սակայն, երբեմն չեն համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Ղեբիտորական պարտքերի և կանխավճարների վերականգնում

Ղեբիտորական պարտքերի մնացորդը ներառում է նաև պետական բյուջեի հանդեպ ունեցած ղեբիտորական պարտքերը: Դեկավարության համոզմամբ պետական բյուջեի հանդեպ ունեցած ղեբիտորական պարտքերն ամբողջովին փոխհատուցվող են:

15 Պայմանական պարտավորություններ

15.1 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով:

Այնուամենայնիվ, շուկայական ավելի խիստ ցնցումների պայմաններում Հայաստանի տնտեսությունը, ինչպես նաև Հիմնադրամի կարող են ընկնել այդ ճգնաժամի ազդեցության տակ, ինչի հետևանքները կարող են լինել նշանակալի: Հիմնադրամի վրա հնարավոր հետևանքները կարող են ներառել անվճարունակությունը, թուլացած հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված ռժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Հիմնադրամի իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ ընկերության ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքների վրա:

15.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում:

Հիմնադրամը չունի ապահովագրության իր ակտիվների (բացառությամբ տրանսպորտային միջոցների), գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասի: Բանի դեռ Հիմնադրամի համապատասխան ձևով ապահովագրված չէ,

գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

15.3 Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա:

15.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Հիմնադրամը բավարարում է ՀՀ կառավարության պահանջները կապված շրջակա միջավայրի հետ և չունի պարտավորություններ կապված շրջակա միջավայրի հետ:

15.5 Գործարքներ կապակցված կողմերի միջև

- ✓ Հիմնադրամի համար փոխկապակցված անձ է հանդիսանում Ստեփանավանի «Լոռի-Բերդ» տուրիստական հանգրվան ՍՊԸ-ն:
- ✓ Հիմնադրամը չի հանդիսանում պետության հետ փոխկապակցված կառույց:

15.6 Վերահսկողություն

Հիմնադրամը վերահսկվում է Հոգաբարձուների խորհրդի կողմից:

15.7 Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով

Հիմնադրամը որպես վարձակալ

Ընկերությունը ունի կնքված պայմանագիր Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի Երևան քաղաքի Վ. Սարգսյան 26/3 62.5 քառ.մ. գույքի վարձակալության համար: Ամսական վարձավճարը կազմում է 140 հազար դրամ: Պայմանագիրը կնքված է երկու տարի ժամկետով, չիսզելու պարագայում պայմանագիրը համարվում է վերակնքված նույն ժամկետով:

Հիմնադրամը որպես վարձատու

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով ստացվելիք վարձավճարը ներկայացված են ստորև.

Հիմնադրամի և «USU Հայաստան» ՓԲԸ միջև 01.03.2009թ. կնքված «Վճարովի ծառայությունների մատուցման» թիվ YER_007 պայմանագրի համաձայն գործառնական վարձակալության է հանձնել Երևան քաղաքի Արմենակյան 250 հասցեում գտնվող շենքի տանիքի հատվածը՝ սարքավորումներ տեղադրելու և շահագործելու համար: Վարձավճարը մեկ ամսվա համար կազմում է 208,333 ՀՀ դրամ: Պայմանագիրը կնքված է երեք տարի ժամկետով: Պայմանագիրը գրավոր չդադարեցնելու պարագայում երկարաձգվում է ևս երեք տարի ժամկետով:

15.8 Իրավական հարցեր

06/11/2019 թվականին Հայաստանում Տուրիզմի Զարգացման Հիմնադրամը (ՀՏԶՀ) դիմել է ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան հայցադիմում ներկայացնելով ընդդեմ Նաիրի Բիզնես Տուր ՍՊԸ-ն՝ գումարի բռնագանձման և բռնագանձումը գրավի առարկայի վրա տարածելու պահանջների մասին՝ խնդրելով պատասխանողից հոգուտ հայցվորի բռնագանձել 85,876,834 ՀՀ դրամ, բռնագանձումը տարածել պատասխանողի կողմից գրավադրված և գրավի առարկա հանդիսացող Երևան քաղաքի Ա. Արմենակյան փողոց թիվ 121/7 հասցեում գտնվող անշարժ գույքի (շինության և հողամասի) վրա: Մաժամանակ Հայաստանում Տուրիզմի Զարգացման Հիմնադրամի ներկայացուցիչը միջնորդել է կիրառել հայցի ապահովման միջոց՝ հայտնելով, որ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Հ. Հարությունյանի կողմից 27/09/2010 թ. Վավերացված անշարժ գույքի տարածամկետ վճարումով առուվաճառքի պայմանագրի՝ ՀՏԶՀ-ը սեփականության իրավունքով իրեն պատկանող Երևան քաղաքի Ա. Արմենակյան փողոցի թիվ 121/7 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ 315,802,201 ՀՀ դրամով վաճառել է պատասխանողին:

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որոշեց հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը բավարարել հայցի ապահովման նպատակով արգելել պատասխանող Նաիրի Բիզնես Տուր ՍՊԸ և երրորդ անձանց գրավի առարկա հանդիսացող Երևան քաղաքի Ա. Արմենակյան փողոցի թիվ 121/7 հասցեում գտնվող անշարժ գույքի տնօրինման հետ կապված որևէ գործողության կատարումը, բռնագանձման գործընթացի իրականացումը:

Դատարանը 17/06/21թ-ին թիվ ԵԴ 38109/02/19 քաղաքացիական գործով որոշում է կայացրել ապացուցման պարտականությունը բաշխելու մասին և սույն քաղաքացիական գործով նշանակվել է դատաքննություն: Դատարանի 13.02.2025թ. թիվ ԵԴ 38109/02/19 կասեցման որոշումը հայցվորի բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.04.2025թ-ի որոշմամբ վերացվել է: Սույնից հետևում է, որ գործի վարույթը պետք է վերսկսվի և շարունակվի:

14.09.2024 թվականին Նաիրի Բիզնես Տուր ՍՊԸ ընկերությունը պատասխան հայցով դիմել է ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փաստարկով, որ Տուրիզմի Զարգացման Հիմնադրամը Հայցվոր՝ Նաիրի Բիզնես Տուր ՍՊԸ ընկերությունը իր հայցի հիմքում դրել է այն փաստարկը, որ Երևանի քաղաքապետարանի 08.12.2010թ. թիվ 01/50-2-23682-648 ճարտարապետահատակագծային առաջադրանքի /տրվել է 2 տարի ժամակետով/ և 02.02.2011թ. թիվ 01/50-573-28 շին.թույլտվության /տրվել է 210 օր ժամակետով/ պատասխանողը կրում է շինարարություն կատարելու պարտականություն, որը չի կատարել: Նշվածի հետևանքով խախտվում է հայցվորի սեփականատիրոջ իրավունքները, չի կարողանում իր գույքը տիրապետել: Պատասխանողը հայցային վաղեմություն կիրառելու միջնորդություն է ներկայացրել, որի վերաբերյալ Դատարանը ապացուցման բեռը բաշխելու մասին որոշում է կայացրել, որի վերաբերյալ դատաքննությունը ավարտվել է և վճռի հրապարակման օր է սահմանվել 29.05.2025թ.:

24.12.2024 թվականին Հայաստանում Տուրիզմի Զարգացման Հիմնադրամը դիմել է ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան հայցադիմում ներկայացնելով ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի Երևան քաղաքի Ա. Արմենակյան փողոցի 121/6 հյուրանոց հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ ՀՏԶՀ-ի անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելուն պարտավորեցնելու և որպես հետևանք՝ 16.01.2025թ. գրությունն անվավեր ճանաչելու համար: Ներկա պահին գործը գտնվում է դատաքննության փուլում:

15.9 Գործարքներ անձնակազմի հետ

Հիմնական ղեկավար անձնակազմի համար ժամանակաշրջանի ընթացքում հաշվեգրվել է հետևյալ վարձատրությունը՝

հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ՝	6,741	6,452

Հիմնական անձնակազմի համար ժամանակաշրջանի ընթացքում հաշվեգրվել է հետևյալ վարձատրությունը՝

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	29,824	30,281
Արձակուրդային	2,640	3,590
Պարգևատրումներ	2,570	2,515
Ապահովագրություն/ գործառույթ կողմից	-	-
Կուտակային ֆոնդին հատկացումներ	-	-
Այլ	449	-